


2024

Միֆուն



ՀԱՅ ԱՖԵՏ. ՊԼԷՆ

ՀԱՅ ԱՐԲԵՏԱՐԱՆԱԿԱՆ Ա. ԵԿԵՂԵՑԻ



ԵՓՐԵՄ ԵՒ ՄԱՐԹԱ ՓԻԼԻՊՈՍԵԱՆ ՀԱՅ ԱՐԲԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈԼԷՃ

(Հիմնուած 1923-ին)

«ՍԻՓԱՆ»

ՏԱՐԵԳԻՐԸ ՀԱՅ ԱՐԲԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈԼԷՃԻ
ԿԱՆՈՆԱԼՈՐԱՔԱՐ ԵՐԱՆ ԿԸ ՄԵՍՆԵ 1959-ԷՆ Ի ՎԵՐ

(ՆԱԽԱԿԵՆ ԱՊԱՐԵՐԱՔԱՐ ԵՐԱՆ ՄԵՍԱԾ Է ՄԵՐԵՆԱԳԻՐ՝ 1940-ԷՆ, ԻՍԿ ՍԱՊԱԳԻՐ՝ 1954-ԷՆ)

Պատասխանատու խմբագիր՝

Կողքի ձեւաւորում

Հրատարակութիւն՝

Եշադրում

Թողարկում

ԴՈԿՏ. ԱՐՄԵՆ ԻՐԱՆԵՆԵԱՆ

ՊՐ. ՎԱՉԳԵՆ ՄՈՐԱՆԵԱՆ

ԵՒ ՕՐԴ. ՀՈՐԻ ԶԵՍԵՆԵԱՆ

ՄԱՀԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՏԻԿ. ԱՆԱԷՆՏ ՊԱՍԵՐ

ՊԵՅՐՈՒԹ, ՄԱՅԻՍ 2025, ԱՌՅԱՆՑ



Դոկտ. Արմեն Իւրնեշլեան
Տւօրէն



Սիրելի ՀԱԳ-ի բարեկամ,

Շատ սիրած բանաստեղծներէս Համօ Սահեանի «Տարիներս, տարիներս, Ո՛ր մնացին տարիներս...» տողերով սկսող բանաստեղծութիւնը յիշեցի, երբ ուսումնասիրութեան մը համար կը թղթատէի ՄԻՓԱՆ-ի նախկին թիւերը: Ի՛նչ անուններ նախկին աշակերտներու եւ ուսուցիչներու, ինչպիսի՜ երիտասարդ դէմքեր այժմու գործակիցներու եւ ծանօթներու...:

Այս տողերը վերստին մտաբերեցի, երբ սոյն թիւին վերջին սրբագրութեան ատեն անդրադարձայ, թէ ՄԻՓԱՆ այս թիւով պաշտօնապէս կը դառնայ 65 տարեկան*: Արդեօք 1959-ին այս տարեգիրքը խմբագրողները գիտէին, որ յամի տեառն 2024-ին, իրենց սկսած նախաձեռնութիւնը պիտի շարունակուի. եթէ նոյնիսկ չէին գիտեր, ապա վստահաբար կը հաւատային, քանի որ ունէին «հաւատքը գալիք աղուոր օրերու» (Ջահրայր):

Եկէք նշենք անունները (1959-60 տարեշրջան).

Հրատարակութիւն ՀԱԳ գրական-գեղարուեստական յանձնախումբի. պատասխանատու ուսուցիչներ՝ օրդ. Ժանէթ Գարամանուկեան (հետագային տիկին Քասունի), պրն.ք Յակոբ Բամպակեան եւ Մանուկ Տէօվլեթեան: Աշակերտներ Հայկ Շամլեան, Քնարիկ Ֆուճուրեան, Ալիս Ոսկերիչեան, Գէորգ Չէօրթիւքեան, Եղուարդ Նազարեան, Հայկ Մսըրլեան, Սոնիա Շահինեան, Ինա Ստեփանեան, Սագօ Բալուկեան եւ Խաչիկ Մանսուրեան:

1959-էն ասդին շատ բան փոխուեցաւ աշխարհի մէջ: Վերի աշակերտներուն համար ChatGPT-ն գիտաբեւեակայական ֆիլմի դրուագ էր, իսկ հիմակուաններուն համար՝ առօրեայի մաս՝ ամենագէտ գործիք, կեանք դիւրացնող հրաշալի հնարք...: Սակայն, վերի երախտաւոր անուններէն 65 տարի ետք, սիրելի՛ ընթերցող, ահա կրկին քեզի կը հրամցնենք ՄԻՓԱՆ-ը, տարբեր ոճաւորումով, սակայն տակաւին մեր բոլորին սիրելի դպրոցին կեանքը ամփոփող բովանդակութեամբ, այն յոյսով, որ տասնամեակներ ետք զայն թղթատողը հպարտութեամբ կը կրկնէ լորեցի բանաստեղծին «Տարիներս, տարիներս...»-ը:

Բարի տարեդարձ ՄԻՓԱՆին եւ բարի ընթերցում քեզի՝ սիրելի ընթերցող:

Ա. Իւրնեշլեան



* ՄԻՓԱՆ ձեռագիր տարբերակով լոյս տեսած է 1940-էն, իսկ 1954-ին սկսած է տպագրուիլ, սակայն 1959-էն է միայն, որ լոյս տեսած է կանոնաւորաբար, նոյնիսկ պատերազմի ամէնէն դաժան տարիներուն, շնորհիւ դոկտ. Ջաւէն Մսըրլեանի ջանքերուն ու հետապնդումին:

Յուսախաբություններու մէջ՝ Կենդանի Յոյս



Վեր. Ժիրայր Նալչանյան
Հովիւ

Իսանդավառ տարեշրջանէ մը դուրս եկանք, երբ տօնեցինք ու յիշեցինք Հայ Աւետարանական Գոլէճի հարիւրամեայ առաքելութիւնը, լի Աստուածատուր գիտութեամբ, կրթութեամբ ու ծառայութեամբ Հայ ազգին համար՝ Քրիստոսաշունչ յանձնարարութեամբ:

Հակառակ Լիբանանի քաղաքական, տնտեսական ու ընկերային ծանր պայմաններուն, Գոլէճը շարունակեց ընդունիլ նոր աշակերտներ պահելով իր աշակերտութեան թիւը: Սակայն, Կազայի 7 Հոկտեմբերի պատերազմական բուռն զարգացումները ուղղակի վտանգեցին նաեւ Լիբանանի ամբողջական ապահովական կայունութիւնը, խաղաղութիւնն ու տնտեսութիւնը: Սա առաջին յուսախաբութիւնն էր: Առ ի անդրադարձ եւ ի նախազգուշութիւն, եկեղեցւոյ ներքնասրահը պատրաստուեցաւ իբրեւ ապաստան եւ մշակուեցաւ անմիջական դատարկման ծրագիր մը՝ հաւանական ռմբակոծումի մը ժամանակ: Այս կացութիւնը մեծ անակնկալ մը չէր, որովհետեւ Գոլէճը վարժ է իր հարիւրամեայ կրթական առաքելութիւնը շարունակելու ճգնաժամներու մէջ անգամ:

Բայց աւելի մեծ յուսախաբութիւնը այն էր, երբ պաղեստինցիներու վրայ կիրարկուած ահաւոր բռնութիւններուն դիմաց աշխարհի աթոռակալները լուռ մնացին: Իբր Հայ ազգ, տակաւին Արցախի կորուստը չենք «մարսած», ու հիմա ուրիշ փնտաժամ պատերազմական վիճակ մը տիրեց, վախի մէջ ապրեցնելով բոլորս:

Ակնկալուած արդարութիւնը պետութիւններէն չէինք ակնկալեր, որովհետեւ լաւ գիտենք թէ անոնք իրենց անձնական շահը կը փնտռեն ընդմիշտ: Մեր յուսախաբութիւնը այն բոլոր «մարդասիրական» հաստատութիւններէն ու կառոյցներէն էր, որոնց հետ սիրոյ ու հաղորդակցութեան պինդ կապ ունէինք: Մեր սպասած արդարութեան ձայնը եբրայեցի մարգարէներէն եկած է մեզի որուն արտացոլացումը Յիսուսի խօսքերուն ու առաքելութեան մէջ կը տեսնենք, երբ Աստուած այնքան սիրեց Մարդը, մինչեւ Իր Որդւոյն Կեանքը դրաւ ԲՈԼՈՐԻՆ համար:

Կը շարունակենք մեր կրթօճախի հայեցի ու քրիստոնէական առաքելութեան ընթացքը, հաւատալով, որ Աստուած Իր Բարութեամբ պիտի միշտ յաղթէ, զի Անոր արդարութիւնը հաստատ ու անշարժ է:

*«Պատերազմները կը դադարեցնէ մինչեւ երկրի ծայրը.
Աղեղը կը կոտորուի ու նիզակը կը ջարդէ, կառքերը կրակով կ'այրէ:*

Հանդարտ կեցէք ու գիտցէք թէ՛ ես եմ Աստուած.

*Հեթանոսներուն մէջ պիտի բարձրանամ, երկրի վրայ
պիտի բարձրանամ:*

*Զօրաց Տէրը մեզի հետ է, Յակոբին Աստուածը մեզի
ապաւէն է»*

(Սաղմոս 46. 9-11):



| ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ բաժանմունք

Ձախեն աջ՝

Օրդ. Վարդուկ Ֆոնդզեան
Տիկ.ք Չարմինե Ասմինեան
Եւ Արփի Գոյունճեան



| ԱՐԱԲԵՐԵՆԻ բաժանմունք

Ձախեն աջ՝

Տիկ.ք Սոնա Մուղալեան
Եւ Նա'ամաթ ալ Խաթիպ
Պրն. Թանիոս Ապտելնուր
(ատենապետ)
Տիկ. Մարիա Ռահպանի (բացակայ)



| ԱՆԳԼԵՐԵՆԻ բաժանմունք

Ձախեն աջ՝

Տիկ.ք Նայիրի Նոիրա
Մարիա Խանճեան
Եւ Անգինե Օպէյո (համակարգող)



Ձախեն աջ՝

Տիկ. Հռութ Եունիսէս - Ս. գիրք
Պրն. Անդրանիկ Այվազեան - Համակարգիչ
Տիկ. Լենա Միլլետերեան եւ օրդ. Լեա Միլլետերեան
- Ֆրանսերէն



Պրն. Վազգէն Մուղալեան
Նկարչուքիւն
Ձեռարուեստ
Թատրոն



ԳԻՏՈՒԹԵԱՆ բաժանմունք

Ձախեն աջ՝

Տիկ.ք Յասմին Տեմիրճեան
Լեյլա Տարուհի
Ռիթա Օհաննեսեան (ատենապետ)
Պրն. Միքայիլ Կոբարեան
Տիկ. Նուարդ Ղորղորեան



ԹՈՒՎԱԲԱՆՈՒԹԵԱՆ բաժանմունք

Ձախեն աջ՝

Պրն. Մահտի Էլ Հիլլանի (ատենապետ)
Տիկ.ք Նազիկ Քեչեճեան
Եւ Յուլիա Քեչիճեան



ԸՆԿԵՐԱՅԻՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ բաժանմունք

Ձախեն աջ՝


Պրն. Հաննա Պշարա (ատենապետ)
Տիկ.ք Ռոզ Պուլեյրի
Թալին Զոլագեան
Եւ Տիկ.ք Նեայմե



ՄԱՆԿԱԴԱՐՏԵՉ

Ձախեն աջ՝

Օրդ.ք Մարինա Մկրտիչեան
Եւ Յասմին Թորոսեան (Մանկապարտիզպանուհի)
Տիկ. Գարուին Սերմանուկեան



Պրն. Հենրի Իշխանեան
Երգ, երաժշտութիւն



Պրն. Ալիսաբերդ Պրեք
Մարմնամարզ

Դոկտ. Զաւէն Մսրրլեան
Պատուակալ տնօրէն



Տիկ. Լարա Գարամանուկեան
Հաշուապահուհի եւ գանձիչ



Օրդ. Մարինէ Շէհրեան
Տնօրէնի օգնական եւ
հանր. հաղորդիչ. համակարգող

Տիկ. Վերա Հաւանճեան
Քարտուղարուհի



Պրն. Վարուժ Էլմաճեան
Ընդհ. հերթապահ



Պրն. Կարօ Տմտմեան
Պահակ



Զախէն աջ՝ **Օրդ. Սիսի Թատեսսէ**
Տիկ.ք Արշօ Աւեսեան
եւ **Հալիմէ Ֆրաթօ Արքա**
Հոգատարներ



ՏԱՆԱ ԱՊՈՒ ՀԺԵՅԼԻ

Failure is the first step towards success

defence



ԼԷԱ ԱՐԺԻՆԵԱՆ

Fear kills hope,
worry kills faith

Lea



ՆԱՐԵԿ ՔԵՕՇԿԵՐԵԱՆ

you only live once, take the risk

Narek



ՍԻՆԹԻԱ ՕՀԱՆԵԱՆ

If you can dream it, you can do it

Syntia

12-րդ դասարան

Ձախեն աջ՝

Լեա Արժիսեան
Սինթիա Օհանեան
Նարեկ Քեօշկերեան
Տանա Ապուլ Հժեյլի

Դաստիարակ՝

Տիկ. Անգինե Օպեյտ



11-րդ դասարան

Ձախեն աջ՝

Արին Պաստաճեան
Սերլի-Ռոզի Շահինեան
Քրիստափոր Ալեմեզեան
Դալար Տագեսեան
Մոհամմատ Համմուտ
Կրեյս Հալաճեան

Դաստիարակ՝

Տիկ. Անգինե Օպեյտ



10-րդ դասարան

Ձախեն աջ, Ա. Հարությունյան՝ Փաթիլ Պետիկեան, Գեորգ Ապաճեան, Սելին Տրդատեան, Նոյեմի Ֆրանսիս, Ալիսիա Գասպարեան, Արտա Գրիգորեան

Ք. շարք՝ Անթոնի Տրժանի, Պետրոս Կիւկլեքճեան, Աստրիա Տեմիրճեան, Ալի Ժապեր



Դաստիարակ՝

ՏԻԿ. ՆՈԼԱՐՈՂ ՆՈՐՈՂՈՐԵԱՆ



Դաստիարակ՝

Տիկ. Արփի ԳՈԼՅՈՒՄՃԵԱՆ

9-րդ դասարան

Ձախեն աջ, Վ. շարք՝ Նարոտ Գարամանուկեան, Լիանա Շահինեան, Նոյեմի Պետրոսեան,
Մարիա Էլմաճեան, Մարիա Պողոսեան, Կարին Ալեմեզեան

Ք. շարք՝ Նարեկ Չոլագեան, Գեորգ Պալեան, Ալեքս Զօգիկեան, Յարութ Կերկերեան, Վարդան Ալեսեան, Իսա Սալիա

8-րդ դասարան

Ձախեն աջ, Ա. շարք՝

Սելին Աստուրեան
Ժուլի Ֆարսաքուրի
Ռոզա-Ռիթա Պարսումեան
Անտրեա Աբրահամեան
Միրա Ղորղորեան

Բ. շարք՝

Ռազմիկ Ինճեան
Չոհրապ Թերզեան
Վարդան Մամիկոնեան

Դաստիարակ՝

Տիկ. Մարիա Խանճեան



7-րդ դասարան

Ձախեն աջ, Ա. շարք՝

Հրակ Քեօշկերեան
Մապել Գասարեան
Տարօն Գոճայեան
Գայիանէ Շէքերճեան
Հրակ Պալեան
Ամիր ապուլ Հժէյլի

Բ. շարք՝

Մարիա Ճօզիկեան
Կապրիէլլա Նոհրա
Վահան Աւեսեան
Կասիա Քէշիշեան
Վարդինէ Օհանեան

Դաստիարակ՝

Տիկ. Մարիա Ռահպանի



6-րդ դասարան

Ձախեն աջ, Ա. շարք՝ Փիթր Այվագեան, Փերլա Հաւանճեան, Ճիօվանի Սալպաշեան,
Վանի Նորշահեան, Կարեն Թերզեան

Բ. շարք՝ Նժդեհ Արժինեան, Ռաֆայել Ֆրանսիս, Պշարա Մուսա,
Դալար Կիւկլեքճեան, Նարի Թեօշկերեան



Դաստիարակ՝
Տիկ. Նա'ամաթ ալ Խաթիպ

7-րդ դասարան

Ձախեն աջ՝
ճօնաթան Տարուհի Թալլա
Սերենա Հատտատ
Հրակ Թերզեան
Մարիանա Մուսա

Դաստիարակ՝
Տիկ. Յուլեր Թեշիշեան





4-րդ դասարան

Ձախեն աջ, Ա. շարք՝

Կապրիել Գույումճեան
Ճասֆիլի Քայերո
Եուգենիֆ Հալաուի
Յովնան Ժամկոչեան
Հուսա ալ Սանտիտ

Բ. շարք՝

Դալար Քիրեճեան
Սերենա Գուլանճեան
Սինթա Տարաքճեան
Էնճի Արահամեան
Սոֆի Նոիրա

Դաստիարակ՝

Տիկ. Նայիրի Նոիրա

3-րդ դասարան

Ձախեն աջ, Ա. շարք՝

Փաթիլ Մամիկոնեան
Սերի Շեքերճեան
Դանիել Թիւթինճեան
Սերենա Հաւանճեան
Ալեքսա Բանոյեան

Բ. շարք՝

Ժուտի Ժապեր
Կարին Քեշիշեան
Լոռի Խանճեան
Լիլա Սալպաշեան

Դաստիարակ՝

Տիկ. Ջարմինէ Ամմինեան



2-րդ դասարան

Ձախեն աջ՝

Տեպորա Տարուհի Թալըպ
Քրիսթիա-Մարիա Նաճարեան
Սառա Սլէյթ
Գարմեն Սայիլեան
Այիուպ Սլէյթ
Փաթիլ Թորոսեան

Դաստիարակ՝

Տիկ. Սոնա Մուղալեան



Ա. դասարան

Ձախեն աջ՝

Ճոյ ալ Խուրի
Առն Ղազարեան
Կայէլ Նաճարեան
Գարինա Թորոսեան
Միշէլ Սամահա
Մարիա Սամահա
Լորէն Սամահա
Գարլի Բանոյեան

Դաստիարակ՝

Օրդ. Վարդուկ Ֆռնըզլեան





Ծաղիկ դասարան

Ձախեն աջ՝

Ալի Մաքքե

Միեր Աւեսեան

Սառա Ազգե

Մարք-Վարդան Ղորղորեան

Կայէլ Թերզեան

Ժան-Փիեռ Գոլյումճեան

Դաստիարակ՝

Օրդ. Յասմիկ Թորոսեան



Կոկոն դասարան

Ձախեն աջ՝

Մուհա Սանտիտ

Նուրայ Սէյֆետտին

Դաստիարակ՝

Օրդ. Մարինա Մկրտիչեան



Բողբոջ դասարան

Ձախեն աջ՝

Ռալֆ Գույումճեան
Ճէյսըն ալ Խուրի
Ժուտ ալ Խուրի
Անի-Երազ Գոճայեան
Ալի Սէյֆէտտին
Վահէ Շէքերճեան

դաստիարակ՝

Տիկ. Գարուկ Սէրմանուկեան





Սեպտեմբեր 2023

ՀԱԳ կը դառնայ շրջակայ միջավայրի բարեկամ՝ տեղադրելով արեգակնային ուժանիւթի վահանակներ, շնորհիւ ՄԱՀԱԵՄ-ի ջանքերուն, Միութեան բարեկամ հաստատութիւններու եւ Ամերիկայի հայ աւետարանչական ընկերակցութեան օժանդակութեան: Այս ծրագիրը միացեալ ծրագիր է Հայ. աւետ. Ա. եկեղեցւոյ, ՀԱԳ-ի եւ Հայկազեան համալսարանին միջեւ:



2023-24 տարեշրջանի վերամուտը կատարուեցաւ 22 Սեպտեմբերին՝ տօնական մթնոլորտի մէջ՝ պաշտամունքով, երգ ու պարով, հիւրասիրութեամբ:





Քոկտեմբեր

ՀԱԳ-ի ընտանիքը շնորհաւորեց հայերէնի ուսուցչուհի տիկին Զարմինէ Ասմինեանը, որ Շաբաթ, 23 Սեպտեմբեր 2023-ին Լիբանանի ամերիկեան համալսարանին մէջ (LAU) Գալուստ Կիլպէնկեան հիմնարկութեան հայկական համայնքներու բաժանմունքի հովանաւորութեամբ մշակուած Լիբանանահայ վարժարաններու ուսուցիչներու վերապատրաստումի երկամեայ ծրագիրը ամբողջացնելուն համար վկայուեցաւ համապատասխան վկայագրով: Հաւաքը կազմակերպած էր Ընկերային յանձնախումբը:



Հոկտեմբեր 27-ին նորակազմ Աշակերտական խորհուրդը, վարչապետութեամբ Դալար Տաքեսեանի (11-րդ) հանդիպեցաւ աշակերտներուն հետ, որոնց ներկայացուց իր ծրագիրը եւ լսեց անոնց առաջարկները:

Մանկապարտէզի աշակերտները ուղղակի շփումներով եւ փորձերով ձեռք կը ձգեն նոր գիտելիքներ եւ հմտութիւններ:





Ֆոյեմեր

Ծանոթացում Համազգայինի գեղարուեստական դպրոցների գործունեություններուն:

Տարբեր դասարանների աշակերտներ սահիկներով ներկայացուցին զանազան երկիրների մշակույթը:



Գիտության դասը տարրալուծարանին մէջ:

Շրջանաւարտ մայեսթրո Կարո Աւեսեան շատ հետաքրքրական դասախօսութիւն մը տուաւ Արամ Խաչատուրեանի մասին, անոր 120-ամեակին առթիւ: Աշակերտներ դիտեցին եւ ունկնդրեցին հատուածներ աշխարհահռչակ երգահանին զանազան ստեղծագործութիւններէն:



Տնօրէնի հետ զրոյց աշակերտները յուզող զանազան հարցերու մասին, գաւաթ մը սուրճի շուրջ:

Լիբանանի անկախութեան տօնին առթիւ աշակերտները այցելեցին Ազգային թանգարան: Այցելութիւնը կազմակերպած էր Գործունեությունների յանձնախումբը:





Դեկտեմբեր

1 Դեկտեմբերի յետմիջօրէին, գրեթէ բոլոր ծնողներու ներկայութեամբ տեղի ունեցաւ տարեշրջանի առաջին Ընդհ. ծնողական ժողովը, ուր ծնողք եւ ուսուցիչներ քննարկեցին աշակերտներուն ուսումնական եւ ընկերային վիճակը: Այդ առթիւ ծնողներուն խօսեցաւ Հայկազեան համալսարանի հոգեբանութեան դասախօս դոկտ. Հանին Հուֆ, ծնողներուն թելադրելով միջոցներ ինչպէ՛ս դիմագրաւելու մանուկներուն վախերը՝ մեզ շրջապատող պատերազմական վիճակի եւ այլ տագնապներու ընթացքին:

Դէպի Կաղանդ

- ▶ “Brownie Decoration” մրցում
- ▶ Խանդավառ շաբաթ մը ամանորեայ երգերով
- ▶ Christmas on Ice (21/12/2024)
- ▶ Կաղանդի տօնակատարութիւն
- ▶ Կաղանդի ընթրիք
- ▶ Ս. Ծննդեան պաշտամունք





Հոնուար

Երկու տարբեր առիթներով աշակերտներուն խրախուսող նիւթերու մասին խօսեցան դոկտ. Սիլվա Սայիլեան եւ տիկ. Լենա Պաղտոյեան:

Կիսամեայ քննութիւն





Դիտարկում

Երկուշաբթի, 12 Փետրուարին ՀԱԳ-ի ամբողջ ընտանիքը նշեց Սրբոց Վարդանանցի եւ Բարեկենդանի տօները: Օրը սկսաւ պաշտամունքով, որուն ընթացքին աշակերտները ելոյթ ունեցան ասմունքներով: Տնօրէն Արմէն Իւրնէշեան իր պատգամը կառուցեց Նուարսակի դաշնագիրը կանխող շրջանին վրայ, չյուսահատելու, ինչպէս նաեւ հոգեւին, մտովին ու ֆիզիքապէս յաղթանակի պատրաստուելու գաղափարը շեշտելով՝ անցեալէն այսօրուան համար դասեր քաղելու համար: Ապա ան երկրորդականի աշակերտներուն հետ զրոյց ունեցաւ «հոյ է հայը» նիւթով, առաւելաբար զիրենք լսելով: Օրը շարունակուեցաւ Ժամանցային պահերով նուիրուած Բարեկենդանին՝ խաղերով, հիւրասիրութեամբ, ձեռնային աշխատանքով եւ ծպտումով, երգ ու պարով: Բարեկենդանը կազմակերպած էր Գործունէութիւններու յանձնախումբը, իսկ Վարդանանցը՝ Հայկական ակումբը:



17 Փետրուար 2024-ին տեղի ունեցաւ Ուսուցչաց հաւաք ընթրիք մը սիրոյ տօնին առթիւ, կազմակերպութեամբ «Դրական թրթիռներ» յանձնախումբին:





Մարտ

1 Մարտ 2024-ի ատենամարզանքի հիւրն էր երգչուհի Գարմէն Աճէմեան, որ աշակերտներու ներկայացուց հայկական արուեստի անգլագական աշուղ Սայաթ Նովան:

6 Մարտին, ըստ տարիներու աւանդութեան, երկրորդական բաժնի խումբ մը աշակերտներ ներկայ եղան Ս. Նշան մայր եկեղեցւոյ Արեւագալի արարողութեան, հանդիսապետութեամբ Արամ Ա. կաթողիկոսին:

7 Մարտին նշեցինք դպրոցի 100-րդ օրը, որ թէ՛ ուրախութեան, թէ՛ զԱստուած փառաւորելու առիթ էր, որ անվտանգ հասանք այս օրուան: Աշակերտներուն հիւրասիրուեցան համեղ doughnut-ներ եւ մանաւանդ... այդ օրուան գրաւորները եղան գրքաբաց (open book):



8 Մարտին Ուսուցչաց տօնի ատենամարզանքը կազմակերպած էր 11-րդ դասարանը: Յատկանշական էր կարգ մը շրջանաւարտներու ալ առցանց մասնակցութիւնը ատենամարզանքին: Այդ առթիւ Ծնողաց մարմինը կազմակերպած էր կէսօրուայ ճաշի հիւրասիրութիւն դպրոցի անձնակազմին:



22 Մարտ 2024-ին պատիւ ունեցանք հիւրընկալելու հանրաճանաչ Պարոյր Սեւակի թողը՝ գրականագէտ Սեւակ Ղազարեանը եւ իր կինը, ինչպէս նաեւ վաստակաշատ բեմադրիչ եւ դերասան Դաւիթ Յակոբեանը, որ Լիբանան ժամանած էին մասնակից դառնալու Պարոյր Սեւակի 100-ամեակի յորելենական հանդիսութեանց եւ «100 ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ» հատորի շնորհանդէսներուն:



Հանրաձանօթ եւ վաստակաշատ CDLL (Cénacle de La Lumière) ընկերության հետ ՀԱԳ կնքած է Համագործակցության համաձայնագիր մը, որով CDLL աշակերտներուն համար պիտի վարէ հոգեկան, առողջական, առողջապահական, ընկերային եւ այլ խնդիրներու մասին կանխարգելումի, իրազեկումի, զօրացումի շատ օգտաւէտ աշխատանիստեր: Արձարժուած նիւթերն էին բռնաճաղրը (bullying), պաստառէ կախեալութիւնը (screen addiction), դրական ինքնադրսեւորումը, առողջապահական խնամքի կարեւորութիւնը և այլն...:



Վանայ ծայնի կազմակերպած ամենամեայ «Անսխալ հնչենք» մրցանքի առաջին բաժինը կատարուեցաւ մասնակից դպրոցներու մէջ: Այդ առիթով յայտագրին անձնակազմը այցելեց ՀԱԳ, ուր 6-7-8-րդ դասարաններու աշակերտներ մասնակցեցան մրցանքին, որուն յաղթողները անցան երկրորդ փուլ:

19 Մարտին Ս. Գիրքի ակումբն ու Պատանեաց շարժումը միասնաբար ունեցան իրենց համագումարը ՔԶԱԿ-ի մէջ, առաջնորդութեամբ պատուելի Տաթև Պասմաճեանի:



Ձատկական գործունեություններ՝ պաշտամունք եւ տոնակատարություն:





Ապրիլ

Հինգշաբթի, 4 Ապրիլին ՀԱԳ-ի ուսուցչակազմն ու պաշտօնէութիւնը առիթը ունեցան ներկայ ըլլալու շատ շահեկան սեմինարի մը «Բախումներու կարգաւորում» նիւթով, զոր հրաշալիօրէն ներկայացուց դպրոցի նախկին երախտապարտ աշակերտներէն արն. Արմէն Պալեան:

Տարիներու դադարէ ետք, այս տարի ութ աշակերտներով մասնակցեցանք ՀՄԸՄ-ԼԵՎԱՄ-ի ճատրակի, փինկ-փոնկի եւ դաշտային խաղերու մրցումներուն: Իբրեւ առաջին փորձառութիւն, արդէն երկու աշակերտ իրենց տարիքային դասակարգումին մէջ արժանացան մետալներու. գունդ հրելու մարզաձեւին մէջ՝ Պետրոս Կիւեքճեան (10-րդ) առաջին, իսկ Հրակ Քէօշկէրեան (7-րդ) երկրորդ տեղերը գրաւելով: Հրակ յաղթական հանդիսացաւ նաեւ վագքի մրցումին: Կը շնորհաւորենք մարզանքի ուսուցիչ արն. Ալիսթըր Պրէթը:



Շաբաթ, 20 Ապրիլին ՀԱԳ-էն 6 աշակերտուհիներ (Փաթիլ եւ Գարինա Թորոսեան, Սառա Սլէյթ, Ժուսի Ժապէր, Սերենա Հաւանճեան եւ Սէրլի Շեքերճեան) մասնակցեցան Կրթութեան նախարարութեան կազմակերպած գեղարուեստական մարմնամարզութեան (artistic gymnastics) մրցումին, Gymbo կեդրոնին մէջ: Ուրախ ենք, որ 6 աշակերտներն ալ արժանացան մետալներու՝ իրենց տարիքային դասակարգումին մէջ: Կը շնորհաւորենք աշակերտուհիները եւ իրենց մարզիչ՝ տիկին Մարինա Ճօզիկեանը:

Ուրբաթ, 26 Ապրիլ 2024-ին վարժարանիս աշակերտները ատենամարզանքի պահուն կոկիկ յայտագրով մը ոգեկոչեցին Հայոց վրայ գործադրուած ցեղասպանութեան 109 ամեակը, խոստանալով միշտ յիշել ու պահանջել մեր իրաւունքներն ու տէր կանգնիլ մեր արդար դատին: Անոնք դիտեցին տեսաերիզներ, հանդէս եկան ասմունքով ու երգով: Երգով ելոյթ ունեցան նաեւ վարժարանիս նուագախումբը եւ շրջանաւարտ Անթոնի Օպէյտ: Ատենամարզանքը կազմակերպած էր Հայկական ակումբը:





Տարեկան պտոյտ դէպի Hillhout Village խաղավայր 9 Մայիս 2024՝ Երկրորդական բաժին:

25 Մայիսին խումբ մը աշակերտներ, առաջնորդութեամբ արն. Պրէթի, մասնակցեցան Այնճարի քոյր դպրոցի կազմակերպած մարաթոնին:



Ս. Գիրքի ակումբի պտոյտ դէպի Պաթրունի եկեղեցիները, առաջնորդութեամբ տիկ. Եունիսէսի:

Մանկապարտէզի մանուկները կը ծանօթանան բանջարեղէններու Spinney's հանրախանութին մէջ:

Շաբաթ, 11 Մայիսին ՀԱԳ Տիկնանց ընկերային յանձնախումբը շատ յաջող շրջապտոյտ մը կազմակերպած էր դէպի Հիւսիս՝ Քուրա, Մզիարա եւ Զղարթա:

Գիւմրիի Յ. Շարամբէեանի անուան Ժող. արուեստի թանգարանի վարպետ դարբին Յովհաննէս Մնոյեան ՀԱԳ-ի աշակերտներուն համար 15 Մայիսին վարեց հայկական զարդանաշխերու փորագրութեան արուեստի աշխատանոց: Ծրագիրը կազմակերպուած էր Հայկազեան համալսարանի կողմէ:





✎ Հովանաւորութեամբ տիկին Թէնի Հասըրճեանի եւ կազմակերպութեամբ ՀԱԳ Ծնողաց մարմինին ու ներկայութեամբ ծնողներու, բարեկամներու եւ հիւրերու, Հինգշաբթի 16 Մայիսին Զաւրայի «Ռուս Պէյրուք» ճաշարանին մէջ տեղի ունեցաւ նախաճաշի հաւաք՝ նշելու Մայրերու օրը: Նուագով ու պարով ելոյթ ունեցող դպրոցի շնորհալի աշակերտները յաւելեալ որակ հաղորդեցին սոյն հաւաքին:

✎ Հայկական պարի դասընթացք վարեց պարուսոյց եւ ՀԱԳ-ի նախկին ուսուցչուհի տիկ. Գարինա Ալեքսանտրեան:





Յունիս

7-րդ կարգի աշակերտ Հրակ Պալեան «Ճիշդ հնչենք» մրցանքին իր դասակարգին մէջ երկրորդ հանդիսացաւ:



Նախակրթարանի տարեկան պտոյտ դէպի Hillhout Village:

Երկարամեայ ասանդական աշակերտական ելոյթին խումբ մը աշակերտներ ցուցադրեցին իրենց տարբեր ծիրքերը: Աարտական հանդէսին օրը 10-րդի աշակերտուի Անտրիա Տէմիրճեան ստացաւ Սոնա Ահարոնեան երժշտ. մրցանակը իր կատարումին համար:



Վերջին զանգ եւ 12-րդ դասարանի հրաժեշտի ատենամարզանք:

Մանկապարտէզի աարտական հանդէսը տեղի ունեցաւ 14 Յունիսին: Բողբոջ, Կոկոն եւ Ծաղիկ դասարաններու աշակերտներ հանդէս եկան երգ ու պարով, թատերական պատկերներով եւ արտասանութեամբ: Վկայական ստացան Ազգի Սառա, Աւեսեան Միւր, Գոյումճեան Ժան-Փիլո, Թերզեան Կաէլ, Ղորղորեան Մարք-Վարդան եւ Մաքքի Ալի:





✎ 2023-2024 տարեշրջանի ասարտական հանդեսը տեղի ունեցավ Շաբաթ, 22 Յունիս 2024-ին դպրոցի շրջափակին մեջ: Երկրորդական բաժանմունքի կենսաբանության եւ տնտեսագիտության ճիւղերու չորս շրջանաւարտներ եւ նախակրթարանի տաս ընթացաւարտներ ստացան իրենց վկայականները: Հանդիսաւոր մուտքէն ետք հնչեցին Լիբանանի եւ Հայաստանի քայլերգերը՝ կատարողութեամբ դպրոցի նուագախումբին (խմբավար՝ պարոն Հենրի Իշխանեան): Հայ աւետ. առաջին եկեղեցւոյ հովիւ վեր. Ժիրայր Ղազարեան կատարեց ընթերցում Աստուածաշունչէն եւ մատուցեց աղօթք, ապա տնօրէն դոկտ. Արմէն Իւրնէշլեան ողջունեց ներկաները եւ ծանօթացուց բանախօսը՝ տիկին Գարմա Էքմէքճին: Գեղարուեստական բաժինը բաղկացած էր ասմունքէ՝ Պ. Սեւակ «Իմ ժողովրդին» (6-րդ դասարան), պարէ՝ «Նազպար» (Դալար Տաքեսեան եւ Սէրլի-Ռոզի Շահինեան»), մենանուագէ՝ Է. Սաթի «Կնոսիէն թ. 1» (Անտրէա Տէմիրճեան) եւ նուագախումբի ելոյթէն՝ Ս. Յակոբեան «Պատգամ Բարեկամիս» եւ Գուսան Աշոտ «Սարի սիրուն եար» (ջութակ՝ Անտրէա Տէմիրճեան եւ Վահան Աւեսեան, դաշնամուր՝ Նարեկ Չոլագեան եւ Վարդան Աւեսեան, թաւ ջութակ՝ Հրակ Պալեան, կիթառ՝ Տարօն Գոճայեան): Վկայականներու բաշխումէն եւ մրցանակներու տուօգութենէն ետք տնօրէնը արտասանեց իր «Հուսկ բանք»-ը, որմէ ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն կազմակերպութեամբ Ծնողաց մարմինի:



28 Յունիսին ուսումնական և արտադասարանային տարբեր յաջողություններ արձանագրած և ծառայություններ մատուցած աշակերտներ ստացան նուէրներ և պատուոգրեր:

28 Յունիսին ուսուցիչները ունեցան տարեվերջի դաշտագնացություն, բարձր տրամադրութեամբ և արտելով տարին:



Սուրբ գիրքի ակումբ



Ակումբի անդամներուն թիւը 36 է: Վարչութիւնը կը բաղկանար Սերի-Ռոզի Շահինեանէ (նախագահ) եւ գործակիցներէ՝ Դալար Տաքսեան եւ Կրէյս Հալաճեան: Ակումբի խորհրդատուն է տիկին Հռութեանիսէ:

Նոյեմբեր 26-ին տեղի ունեցաւ քննարկում «Իմ արժէքս» նիւթով:

Դեկտեմբեր 26-ին այցելեցինք ԶԱՀԼ՝ Պատանեացին հետ միասնաբար տարածելու Փրկչին ծննդեան աւետիսը:

Փետրուարի 13-ին միասնաբար ճաշեցինք եւ քննարկեցինք տարբեր տեսակի սերերու մասին:

Մարտի 8-9-ին ունեցանք մեր ամենամեայ համագումարը ԶԶԱԿ-ի մէջ: Նիւթն էր «Ինչպէս վարուիլ մեզ շրջապատող ... հետ»: Վարիչն էր պատուելի Տաթև Պասմաճեան:

Մայիս 10-ին ունեցանք ուղեւորութիւն մը դէպի Պաթրոն. այցելեցինք եկեղեցիներ, այնուհետեւ միասին ունեցանք որակեալ ժամանց:

Փառք կու տանք Աստուծոյ այս առիթին համար:



Հայկական ակումբ



Ակումբի առաջին նիստը տեղի ունեցաւ 27 Հոկտեմբեր 2024-ին, «67-ի շրջանաւարտներ» լսատեսողական սրահին մէջ: Առաջին հերթին կատարուեցաւ դիւանի ընտրութիւն հետեւեալ կազմով.

Ատենապետ՝ Վարդան Աւեսեան
Ատենադպիր՝ Լիանա Շահինեան
Գանձապահ՝ Կարին Ալեքմէզեան
(բոլորն ալ 9-րդ դասարան)

Ակումբի խորհրդատուն է տիկին Արփի Գոյումճեան:

Տարեշրջանի ընթացքին ակումբը ունեցաւ հետեւեալ գործունեութիւնները.

20 Հոկտեմբերին Նշեց «Թարգմանչաց Տոն»ը, բոլոր աշակերտներուն հետ:

8 Դեկտեմբերին աշակերտներուն ներկայացուեցան հայկական ամանորեայ աւանդական սովորութիւններ եւ կատարուեցաւ մրգեղէնի հիւրասիրութիւն:

26 Ապրիլին ամբողջ դպրոցին համար կազմակերպուեցաւ «Ապրիլեան ոգեկոչում»:



Աշակերտական խորհուրդ



Ընթացիկ վարչութիւնը ընտրուեցաւ միաձայնութեամբ՝ մրցակից կազմի չգոյութեան պատճառով:

Ակումբի վարչապետն էր Դաւար Տաքետեան, իսկ անդամները՝ Նարեկ Քեօշկերեան եւ Տանա ապու Հժէյի (12-րդ), Կրէյս Հալաճեան (11-րդ), Արտա Գրիգորեան եւ Սելին Տրդատեան (10-րդ), Մարիա Պօղոսեան (9-րդ), Միրա Ղորղորեան (8-րդ) եւ Հրակ Պալեան (7-րդ):

Տարեշրջանին կազմակերպուեցան հետեւեալները.

1. Brownie-ի ազգային օր - Այս գործունեութիւնը միջոց էր հաւաքուելու և Ամանորը զուարճալի ձեւով սկսելու:
2. Աշակերտական սրահի վերաբացում, որպէսզի աշակերտները օրուայ ընթացքին հանգստանալու ապահով տարածք ունենան:
3. Այլ հայկական դպրոցի մը մէկ աշակերտին բժշկական ծախսերու մասնակցութեան դրամահաւար:
4. Սուրճ՝ տնօրէնին հետ - 10-11-12-րդի աշակերտներ տարբեր առիթներով ազատ հանդիպում ունեցան տնօրէնին հետ, գաւազան հարցերու մասին:
5. Ժամանակի պարկուճ (Time capsul) - Ուսանողներ եւ ուսուցիչներ տուփի մէջ տեղադրեցին զանազան գրութիւններ եւ իրեր, որոնք ուղղուած էին 15 տարի ետք գիրենք փոխարինողներու:



Ծնողաց մարմին



Աստուծոյ կամքով եւ առաջնորդութեամբ ՀԱԳ Ծնողաց մարմինը այս տարի եւս կարողացաւ դպրոցի տնօրէնութեան հետ գործակցելով յաջողցնել կարգ մը ծրագիրներ:

Մարմինի անդամներն են.

Ատենապետ՝ տիկ. Վերա Հատտատ
Փոխատենապետ՝ տիկ. Ալին Պօղոսեան
ատենադպիր՝ տիկ. Հուրի Ղազարեան
գանձապահ՝ պրն. Եղիկ Թորոսեան
հաշուապահ՝ տիկ. Սիլվա Տաքետեան
խորհրդականներ՝ տիկ.ք Յասմիկ Աւետեան,
Յասմիկ Գոճայեան, Վանեսա Ֆրանսիս,
Սաթենիկ Աբրահամեան եւ պրն. Մարտիկ
Շեքերճեան

2023-2024 տարեշրջանի Ծնողաց մարմինի ծրագիրներն էին.

1. Վերամուտի նախաճաշ՝ աշակերտներուն:
2. Ուսուցչաց տօնի առթիւ ճաշի հիւրասիրութիւն՝ անձնակազմին:
3. Մայրերու օրուայ առթիւ նախաճաշ, Մայիս 11-ին, նախագահութեամբ տիկին Թէնի Հասրճեանի: Հաւաքին, զեղարուեստական յայտագիրով իրենց մասնակցութիւնը բերին երկրորդականի աշակերտները եւ շրջանաւարտ Անթոնի Օպէյտ:
4. Տարեվերջի շրջանաւարտից հանդեսին, բոլոր ներկաները հիւրասիրուեցան համադամ խորտիկներով եւ կարկանդակով:



Տիկնանց օժանդակ մարմին



Այս տարի եւս Մարմինը դպրոցէն ներս իրականացուց կարգ մը միջոցառումներ եւ գործունեութիւններ հետեւեալ կազմով.

տիկ.ք Վերա Հատտատ՝ ատենապետ, Յասմիկ Աւեսեան՝ ատենադպիր, Սիլվա Տազետեան՝ հաշուապահ, Սալբի Գալուստեան եւ Վիքի Պապիկեան՝ պահեստապետ, Ալին Պօղոսեան՝ խորհրդատու, ինչպէս նաեւ Գոհար Գրիգորեան, Շողիկ Պապեան, Արմինէ Պետրոսեան, Զրիստինէ Վարդանեան, Շուշիկ Սարեան, Յասմիկ Գոճայեան եւ Սիլվա Լեփեճեան:

Ամանորի եւ Չատկուան տօներուն ու տարեվերջի առթիւ գործադրուեցաւ այլազան ճաշերու եւ խորտիկներու հիւրասիրութիւն՝ աշակերտներուն: Ինչպէս նաեւ կատարուեցան աւարտական հանդեսի հիւրասիրութիւնն ու սրահի ձեւաւորումը:

Ամէն հինգշաբթի կատարեցինք ծոթրինով հացի հիւրասիրութիւն՝ օժանդակութեամբ Լոս Անճելըսի Հայ մայրերու եւ ուսուցչուհիներու միութեան:

Մարմինը ստանձնած ըլլալով դպրոցի քաֆերիան, կատարեց առօրեայ ուտեստներու վաճառք՝ սերտուած առողջապահական բոլոր պահանջներով: Ինչպէս նաեւ վերանորոգեցինք քաֆերիան եւ գնեցինք նոր իրեր:

Հարկ է տեղեկացնել, որ տիկ.ք Սալբի Գալուստեան, Յասմիկ Աւեսեան, Սիլվա Տազետեան եւ Վիքի Պապիկեան գերազանցութեամբ աւարտեցին YWCA-ի խոհանոցային վարպետութեան դասընթացը, որ անլի օգնեց քաֆերիայի աշխատանքներուն:



Տիկնանց ընկերային յանձնախումբ



Յանձնախումբի անդամներն են՝ տիկ.ք Ռուպինա Արթինեան (ատենապետուհի), Արուս Լեպլեպճեան, Լիլա Արթինեան, Մարալ Մխսեան, Սիլվա Տաքետեան եւ Փաթիլ Խտըրլարեան:

Նոր տարուան առիթով կատարուեցաւ վաճառք մը (բարձ եւ runner) սատար հանդիսանալու վարժարանին:

Իսկ 11 Մայիս 2024-ին յանձնախումբը կազմակերպեց պտոյտ մը, որուն մասնակցեցան 85 անհատներ: Այցելութեան վայրերն էին՝ Պտըպպէ՝ 7 գմբէթով եկեղեցի, Միգիարա՝ Մարիա Կրօթէ եկեղեցի, Չղարթա՝ ճաշարան «Ժսըր Ռաշ'ին»:



Դրական թրթիռներ (Positive vibes) յանձնախումբ



2023-2024-ին ստեղծուած սոյն յանձնախումբին մաս կազմեցին տիկ.ք Նուարդ Դորդորեան, Վերա Հաւանճեան, Յոլեր Քէշիշեան եւ օրդ.ք Վարդուկ Ֆռնրզլեան ու Մարինա Մկրտիչեան: Նպատակը՝ աշակերտներուն եւ անձնակազմին մէջ դրական տրամադրութիւններ յառաջացնելն էր:

Տարուան ընթացքին իրականացան հետեւեալ աշխատանքները.

▶ Անձնակազմի անդամներու տարեդարձներու նշում:

▶ Աշակերտներուն յառաջադիմութիւնը խրախուսելու համար մէկ շաբաթ բոլոր գրաւորներուն +5 նիշ տրուեցաւ: Նաեւ մէկ օր անակնկալօրէն արտօնութիւն տրուեցաւ բաց գիրքով գրաւոր ընելու (open book test):

▶ Մասնակցելով Սուրբ ծննդեան ընդհանուր տօնակատարութիւններուն, յանձնախումբը աշակերտներուն քաղցր տարի մաղթեց՝ անոնց թիւածքներ հրամցնելով: Պատրաստուեցան նաեւ ձեռագործ Սուրբ ծննդեան բացիկներ՝ տնօրէնութեան, հոգաբարձութեան եւ Ծնողաց մարմինին համար:

▶ Աշակերտները տարբեր տեսակի սննդամթերքերին եւ գետեղեցին տօնածառին տակ՝ որպէս նուէր 10 կարիքաւոր ընտանիքներու:

▶ Կազմակերպուեցաւ «Սիրոյ սեղան» ուսուցիչներու միջեւ մտերմիկ ժամանց ստեղծելու համար:

▶ Կազմակերպեցինք նախաճաշ մը դպրոցի հոգատարներուն համար, Բանուորաց տօնին առթիւ:

▶ Մայիս 22-ին ունեցանք Չատկուայ հաւաքոյթ, երբ Ա. - ԺԲ. դասարաններու համար կազմակերպուեցան ձեռային աշխատանքներ:

▶ Յունիս 28-ին ուսուցիչներու եւ անձնակազմի մեծամասնութեան մասնակցութեամբ յանձնախումբը կատարեց իր վերջին գործունեութիւնը կազմակերպելով դաշտագնացութիւն:



Ընկերային յանձնախումբ



Ընկերային յանձնախումբը կը բաղկանայ չորս անդամներէ՝ տիկ.ք Սոնա Մուղալեան, Նազիկ Քէշեճեան, Նա'ամաթ ալ Խաթիպ եւ օրդ. Մարինէ Ծէհիրեան:

Տարուան ընթացքին յանձնախումբը ծաւալեց հետեւեալ գործունեութիւնները:

13 Հոկտեմբերին, նուէրով մը շնորհաւորեցինք տիկին Չարմինէ Ասմինեանը, որ 23 Սեպտեմբեր 2023-ին, LAU համալսարանին մէջ Գ. Կիւլպէնկեան հիմնարկութեան հովանաւորութեամբ մշակուած Լիբանանահայ վարժարաններու ուսուցիչներու վերապատրաստումի երկամեայ ծրագիրը ամբողջացնելով վկայուած էր համապատասխան վկայագրով:

Առիթներով նշուեցան անձնակազմի անդամներուն տարեդարձները:

26 Դեկտեմբեր 2024-ի երեկոյան, Ամանորի առթիւ ընթրիք՝ Ամարիլլա ճաշարանէն ներս:

14 Մարտին դպրոցին մէջ բացուեցաւ աւանդական միջինքի սեղան, լի Մեծ պահքի յատուկ հայկական համադամ ճաշերով եւ անուշեղեններով:



ՏԵՍՉԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՒԼԵԾԻ

2023-2024 ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

այ ամենամյա անվերջ փառք տալով Ամենակալին, որ տարին ընթացաւ ապահով եւ դպրոցի կրթական ծրագիրը ամբողջացուցած՝ հակառակ քաղաքական ու ապահովական անորոշութեան: Փանք Աստուծոյ իր պարգեւած շնորհքներուն եւ ողորմածութեան համար, որուն վկան եղանք նաեւ այս տարի, իբրեւ հաստատութիւն եւ այնտեղ ծառայող անհատներ:

ՎԵՐԱՄՈՒՏ

2023-2024 տարեշրջանը սկսաւ 22 Սեպտեմբեր 2023-ին եւ պաշտօնապէս ամառուեցաւ 20 Յունիս 2024-ին: Տարեշրջանի ընթացքին ունեցանք 157 դասաւանդութեան եւ քննութեան օրեր: 44 օր դպրոցը փակուեցաւ արձակուրդի, քննութեանց միջեւ դադարի եւ այլ անակնկալ պատճառներով (նախարարութեան հրամանով):

ԱՇԿԱԵՐՏՈՒԹԵԱՆ ԹԻԻ

Աշակերտութեան թիւը տարեկիգրին կը ներկայացնէր հետեւեալ պատկերը, որ երկուքով նուազ է անցեալ տարեշրջանէն:

Բաժին	Աշակերտութիւն	Դասարաններ
Մանկապարտէզ	14	3
Նախակրթարան	49	6
Միջնակարգ	31	3
Երկրորդական	21	4
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ	115	15

Ունեցանք 26 ոչ-հայ աշակերտներ (մէկը պրագիլ-ցի), հետեւեալ դասարաններուն մէջ. մանկապարտէզ (6 հոգի), նախակրթարան (14 հոգի), միջնակարգ եւ երկրորդական (3ական հոգի): Ասոնցմէ 18-ը կանոնաւորաբար կը հետեւին հայերէնաւանդ դասերուն: Խառն ամուսնութեանց զաւակներու ընդհանուր թիւը 12 է (8 ընտանիք). 6 աշակերտի (3 ընտանիք) հայրը հայ է, իսկ 7-ինը (5 ընտանիք)՝ մայրը հայ: Բացի մէկէն, որ քառորդ հայ է եւ նորեկ է ու բնաւ հայերէն չի գիտեր, բոլորը կը հետեւին հայերէնով դասաւանդութիւններուն եւ գործունէութիւններուն:

Տարեշրջանի կիսուն երկու աշակերտ (քոյր-եղբայր) գաղթեցին ԱՄՆ: Մէկ աշակերտուի բնակութեան վայրի փոփոխութեան պատճառով ձգեց դպրոցը: Հետեւաբար տարին փակեցինք 113 աշակերտով

Աշակերտութեան աշխարհագրական բաժանումը ունէր հետեւեալ պատկերը.

Շրջան	Թիւ	համեմատութ.
Պէյրութ կեդրոն եւ արեւմտ. արուարձաններ	28	25%
Աշրաֆիէ եւ Մար Մխայէլ	3	2.6%
Պուրճ Համուտ, Տքուանէ	31	28%
Տորա, Հանքաշ, Ամանոս, Պաուշիէ, Ֆանար, Ռաուտա	23	20.5%
Ժտէյտէ, Զալքա, Անթիլիաս, Պսալիմ, Մզիէր, Ռապուէ	14	12.5%
Տպայլէ, Նաքքաշ, Աուքար	4	3.5%
Մանսուրիէ, Այն Սաատէ, Պրումմանա	4	3.5%
Այն էլ Ռմմանէ, Շիահ	5	4.4%

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ ԵՒ ԸՆԴՀ. ՊԱՇՏՕՆԵՈՒԹԻՒՆ

Դպրոցի ուսուցչակազմի եւ պաշտօնէութեան միջին տարիքը 52 է. միջին ընդհ. փորձառութիւնը՝ 24 տարի: Ամբողջ անձնակազմի 69%-ը կը պատկանի իգական սեռին, 31%-ը՝ արական:

Բնոյթ (ամբողջ անձնակազմ)

Վարչական պաշտօնէութիւն	6	
Դռնապան, տնտես, մաքրող	4	
Վարորդ	5	
Մնայուն ուսուցիչներ	15	47%
Այցելու ուսուցիչներ	17	23%

ԸՆԴՀԱՆՈՒՐ

Ազգութիւն (ամբողջ անձնակազմ)

Հայ	35	75%
Արաբ	10	21%
Այլ	2	4%

Ուսց./պաշտ. ակադ. աստիճաններ

PhD	2
MA, MS, Maitrise, BA+TD	10
BA, BS, License	20
Մանկվրժ./վարչրկ. որակաւորում	3
Այլ	2

Ուսց./պաշտ. փորձառութիւն ըստ տարիներու

	Ընդհ.	ՀԱԳ-էն ներս
– 5	7	14
5 – 10 տարի	1	5
11 – 15 տարի	1	8
16 – 20 տարի	7	3
21 – 25 տարի	5	3
26 – 30 տարի	7	4
31 – 35 տարի	7	3
41 – 45 տարի	1	
46 – 50 տարի	1	
60+	1	1

Տարուան աւարտին պաշտօնէն հրաժարեցան պր. Հենրի Իշխանեան (ուսումը շարունակելու նպատակով) եւ պահակ Կարօ Տմորմեան (Հալէպ վերադառնալու համար): Սեպտեմբերին իր հրաժարականը ներկայացուց պր. Մհեր Կոբարեան:

Տեղի ունեցան երկու ընդհանուր ծնողական ժողովներ, ինչպէս նաեւ շարք մը դասարանային եւ բազմաթիւ անհատական հանդիպումներ ծնողներու հետ:

Ուսուցչական կազմի ժողովները եղան թէ ընդհանուր, թէ փոքր խումբերով եւ անհատական հանդիպումներով:

Ուսուցչաց խորհուրդը պարբերաբար գումարեց աշխատանքային ժողովներ, որոնց ընթացքին առնուեցան կրթական կեանքի ու դրուածքի առնչուող կարեւոր որոշումներ:

Սկսանք գործարկել Eschool առցանց հարթակը:

Հաուըրտ Գարակէօզեան հիմնարկութիւնը աշակերտութեան եւ անձնակազմին համար կատարեց առողջապահական քննութիւններ:

Տիկին Զարմինէ Ասմինեան վկայուեցաւ Հայ ուսուցիչներու վերապատրաստութեան երկամեայ դասընթացքէն, որ կազմակերպուած էր LAU համալսարանին կողմէ, հովանաւորութեամբ Գ. Կիւլպէնկեան հիմնարկութեան: Ամբողջ ուսուցչակազմը մասնակցեցաւ դպրոցին կազմակերպած սեմինարին, որ վարեց պր. Արմէն Պալեան, «աշխատավայրի մէջ բախումներու կանխում եւ հարթում» նիւթով:

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

Գոլէճի հիմնական առաքելութեան հետամուտ՝ ունեցանք կանոնաւոր առաւօտեան պաշտամունքներ՝

նախակրթարան եւ մանկապարտէզ՝ երկուքական օր, եւ միացեալ՝ մէկ օր, պարբերականութեամբ: Մանկապարտէզը նոյնպէս ունեցաւ իր ամէնօրեայ պաշտամունքները: Պաշտամունքները վարեց տիկին Հռութ Եունիսէս: Ունեցանք նաեւ հիւր պատգամաբերներ: Վեց կիրակնօրեայ աշակերտական պաշտամունքներու ներկայ եղան երկրորդական բաժնի հայ աշակերտները: Ասոնց մէջ յատուկ էին վերամուտի եւ շրջանաւարտից գոհաբանական պաշտամունքները:

Հոգեւոր աճման համար շարունակուեցան Սուրբ գիրքի դասաւանդութիւնները. արժանի է նշել թէ միջնակարգ-երկրորդական բաժնի աշակերտներուն մեծ մասը մասնակցեցաւ ՀԱԱ եկեղեցւոյ Պատանեաց շարժումին: Գործեց Աստուածաշունչի ակումբը: Եկեղեցւոյ հովիւը մօտէն հետեւեցաւ աշակերտներուն 11-րդ դասարանին դասաւանդելով «Աշխարհի կրօններ»:

ԱՇԿԵՐՏԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ակադեմական

2024 Մայիս 13 – 18 12-րդի աշակերտները մասնակցեցան հայ աւետ. վարժարաններու միացեալ փորձնութիւններուն: Պրէօլէի քննութիւնը ջնջուած ըլլալուն, 9-րդիները զերծ կացուցուեցան այս քննութիւններէն, փոխարէնը տարեվերջին ունեցան ամավերջի քննութիւն:

Յունիս 29 – Յուլիս 4 աւարտական դասարանի չորս աշակերտները մասնակցեցան պաքալորեայի պետական քննութիւններուն, արձանագրելով 100 առ 100 պատուաբեր յաջողութիւն, որոնցմէ մէկը «լաւ» յիշատակութեամբ:

Սա յաջորդաբար ու անընդմէջ 8-րդ տարին է որ ՀԱԳ կ'արձանագրէ 100 առ 100 յաջողութիւն պաքալորեայի քննութիւններուն:

Արտադասարանային եւ արտադպրոցական

Շարունակեցին գործել Սուրբ գիրքի եւ Հայկական ակումբները եւ Աշակերտական խորհուրդը:

Սուրբ գիրքի ակումբ (պատասխանատու՝ տիկին Հռութ Եունիսէս)

Դիւանի անդամներն էին Սէրլի-Ռոզի Շահինեան (ա.պետ) եւ Դալար Տաքեսեան ու Կրէյս Հալաճեան: Տարուան ընթացքին անոնք ունեցան քննարկումներ եւ պտոյտներ, Ամանորի եւ Սուրբծննդեան տօնին առթիւ Պատանեացին հետ այցելեցին Հայ տարեցներու տուն, իսկ 8 եւ 9 Մարտին ՔՋԱԿ-ի մէջ ունեցան իրենց տարեկան հաւաքը, «մեզ շրջապատող չարին ինչպէս դիմադրել» նիւթով. պատգամաբերն էր պատուելի Տաթեւ Պասմաճեան:

Հայկական ակումբ (պատասխանատու՝ տիկին Արփի Գոյումճեան)

Դիւանի անդամներն էին ա.պետ՝ Վարդան Աւեսեան, ա.դպիր՝ Լիանա Շահինեան եւ գանձապահ՝

Կարին Ալեմեզեան: Տարուան ընթացքին անոնք կազմակերպեցին ատենամարզանքներ Թարգման-
չաց տօնին, Կաղանդի հայկական սովորություններու
եւ Հայոց վրայ գործադրուած ցեղասպանութեան նշու-
մին առթիւ:

Աշակերտական խորհուրդի վարչութիւնը ընտրուեցաւ
տարեսկիզբին՝ վարչապետ ունենալով Դալար Տաքես-
եանը (11-րդ):

Տարուան ընթացքին անոնք ունեցան զանազան
հաճելի եւ օգտաշատ գործունէութիւններ՝ ուղղուած ա-
շակերտներու առօրեայի բարելաւման:

Այս տարի դպրոցը ունեցաւ իր **նուազախումբը**
ղեկավարութեամբ պարոն Հենրի Իշխանեանի, մաս-
նակցութեամբ հետեւեալ աշակերտներուն. ջութակ՝
Անտրիա Տեմիրճեան (10-րդ) եւ Վահան Աւեսեան (7-
րդ), դաշնամուր՝ Վարդան Աւեսեան (9-րդ) եւ Նարեկ
Չոլագեան (9-րդ), թաւ ջութակ՝ Հրակ Պալեան (7-րդ),
կիթառ՝ Տարօն Գոճայեան (7-րդ), փողային գործիք-
ներ՝ Գէորգ Պալեան (9-րդ): Խումբը ելոյթ ունեցաւ
ատենամարզանքներու ատեն՝ Կաղանդ եւ Ապրիլ 24,
հայ աւետ. եկեղեցիներու միացեալ պաշտամունքնե-
րու՝ Մեծ եղեռնի ոգեկոչման եւ Համաշխարհային ա-
ղօթքի օրուայ առթիւ, ինչպէս նաեւ Ամալերջի
հանդէսին եւ Ծնողաց մարմինի նախաճաշի ձեռնար-
կին:

Մեծաթիւ աշակերտներ մասնակցեցան նկարչա-
կան, շարադրական, ասմունքի եւ հնչաբանութեան
մրցանքներու: Մրցանակներու տիրացան 7-րդ դասա-
րանէն Հրակ Պալեան («Ծիշդ հնչենք»), Պետրոս Կիւլ-
լեքճեան եւ Հրակ Քէօշկերեան (ԼԵՎԱՄ-ի դաշտային
խաղեր), Սէրլի Շեքերճեան եւ Սերենա Հաւանճեան
(գեղ. մարմնամարզ)՝ վարիչ տիկին Մարինա Ճօզիկ-
եան:

Նախակրթարանի եւ երկրորդականի ատենամար-
զանքներուն ընթացքին (պատասխանատուներ տիկ.ք
Արփի Գույումճեան եւ Զարմինէ Ամինեան) կազմակեր-
պուեցան ընկերային, մշակութային, դաստիարակչա-
կան բնոյթի գործունէութիւններ, նշուեցան զանազան
տօնական առիթներ, ինչպէս նաեւ կազմակերպուեցան
բազմաբնոյթ խաղեր եւ մրցումներ:

Երկրորդականի եւ նախակրթարանի վերին կար-
գերը մասնակցեցան Հայկազեանի կազմակերպած
MUN-ին, ինչպէս նաեւ ազգային դարբնութեան աշխա-
տանիստերու:

Աշակերտներուն ընկերային հմտութիւնները
զարգացնելու եւ առողջապահական գիտակցութիւնը
զարգացնելու նպատակով CDLL կազմակերպութիւնը
վարեց օգտաշատ աշխատանիստեր նախակրթարանի
եւ երկրորդականի բոլոր աշակերտներուն համար:

Երկրորդականի աշակերտներ մասնակցեցան Data
Analysis դասընթացքի եւ արժանացան գնահատագիրե-
րու:

Կազմակերպուեցան զանազան պտոյտներ եւ ար-
տադարոցական այցելութիւններ, որոնց մէջ յիշարժան
եղաւ զբօսախնճոյքի օրը Հիլ Հաթի մէջ:

Ուսուցչական կազմը նոյնպէս աշխուժ գործու-
նէութիւն ծաւալեց: Այս տարի 3 յանձնախումբեր
կազմուեցան ուսուցչական եւ աշակերտական գոր-
ծունէութիւններ ծրագրելու եւ իրականացնելու հա-
մար:

Դրական թրթիռներ (Positive vibes) խումբը (առաջնոր-
դութեամբ տիկին Նուարդ Ղորղորեանի), առիթներով
նշեց ուսուցիչներու տարեդարձները եւ շնորհաւորեց
անոնց տարբեր ձեռքբերումները, Կաղանդի եւ Զատիկ-
ուան առթիւ գործունէութիւններ իրագործեց, կազմա-
կերպեց սուրբծննդեան նուիրահաւաք՝ Կաղանդի առթիւ
10 կարօտեալ ընտանիքներու, Բանութրաց տօնին նա-
խաճաշով հիւրասիրեց դպրոցի հոգատարները, ինչպէս
նաեւ 18 Փետրուարին կազմակերպեց ուսուցչաց «սիրոյ
սեղան» իսկ տարեվերջի առթիւ՝ պտոյտ-դաշտագնա-
ցութիւն՝ Յունիս 28-ին:

Ընկերային յանձնախումբը (առաջնորդութեամբ տի-
կին Սոնա Մուդալեանի) կազմակերպեց Ամանորի ընթ-
րիք եւ միջինքի հիւրասիրութիւն:

Գործունէութիւններու յանձնախումբը (առաջնորդու-
թեամբ տիկին Հռութ Եունիսէսի) կազմակերպեց այցե-
լութիւն Լիբանանի ազգային թանգարան, Ամանորի
արձակուրդին նախորդող ամբողջ շաբաթը զանազան
ուրախ անակնկալներ մատուցեց աշակերտներուն, Բա-
րեկենդանի եւ Ամալերջի առթիւ աշակերտական գոր-
ծունէութիւն իրականացուց, իսկ Մայրերու օրի եւ
Ատհայի առթիւ ուսուցչակազմը պատուեց հիւրասիրու-
թեամբ:

ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Տիկնանց օժանդակ յանձնախումբը իր գործունէութիւ-
նը շարունակեց առաւելաբար ծառայելով քաֆէթերիա-
յէն ներս: Յատկանշական էր կամաւոր ծառայութիւնը,
ոչ միայն այժմու, այլեւ նախկին ծնողներու եւ նոյնիսկ՝
տիկնաններուն բարեկամներուն ու դրացիներուն: Օ-
ժանդակ յանձնախումբը կազմակերպեց նաեւ աշակեր-
տական հիւրասիրութիւններ՝ զանազան տօնական
առիթներու եւ Լոս Անճելըսի հայ տիկնաններու եւ մայրե-
րու յանձնախումբին աջակցութեամբ այս տարի ալ ամէն
շաբաթ ձրի նախաճաշ հրամցուց բոլոր աշակերտ-
ներուն:

Տիկնանց ընկերային յանձնախումբը 11 Մայիսին կազ-
մակերպեց պտոյտ մը դէպի Քուրա, Մգիարա եւ Զդար-
թա:

Ծնողաց մարմինը 16 Մայիսին կազմակերպեց իր ա-
ւանդական նախաճաշը եւ Ամալերջի հանդէսի հիւ-
րասիրութիւնը:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Առցանց լոյս տեսան «Լրատու»-ի երեք թիւեր (ԻԵ. տարի թիւ 1, 2, 3): «Սիփան» տարեգիրքը (2023 տարի) նոյնպէս լոյս տեսաւ առցանց:

Դպրոցի գործունէութիւնները շատ մեծ տարածումով լուսաբանուեցան առցանց՝ Ֆեյսպուքի (www.facebook.com/aecollege.lb), ինսթակրամի (<https://www.instagram.com/aecollege/>) եւ կայքին (<http://www.aecbeirut.edu.lb/>) միջոցաւ: Դպրոցի Ֆեյսպուքի էջին վրայ Սեպտ. 2022 – Յուլիս 2023 եղած է 123 տեղադրում, որոնք հասանելի եղած են ընդհանուր 238,443 հոգիի: Ամենամեծ լսարանը ունեցած են արձանագրութեան ծանուցումը՝ 15,031 (12/08/23) դիտում եւ հարիրամեակի համար պատրաստուած հոլովակը՝ 13,304 դիտում (29/12/23): Ինսթակրամը ունեցած է 90 տեղադրում եւ հասանելի եղած է ընդհանուր 93,681 անձի:

ՎԿԱՅԱՎԱՆԱՑ ԲԱՇԽՈՒՄ

14 Յունիսին կոկիկ հանդէսի մը ընթացքին, Ծաղիկ դասարանէն վկայուեցան 6 աշակերտներ, իսկ Յունիս 22-ին իրենց վկայականները ստացան 8 ընթացաւարտներ (6-րդ դասարան) եւ 4 շրջանաւարտներ (12-րդ դասարան): Հիւր բանախօսն էր տիկին Գարմա Էքմէքճի (2001-ի շրջ.): Նոյն օրը պատուուեցան 1963-ի եւ 1964-ի 5 շրջանաւարտներ՝ իրենց շրջանաւարտութեան վաթսունամեակին առթիւ:

ԿՐԹԱՆՊԱՍՏ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ ԵՒ ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Իբրեւ ոչ-շահութաբեր հաստատութիւն, ՀԱԳ-ի ամաւարկը, բացի աշակերտներէն գանձուած գումարներէն, առաւելաբար կը գոյանայ հիմնադրամներու յատկացումներով եւ նուիրատութիւններով: Դպրոցին ամաւարկին 29.86 առ հարիւր գոյացած է աշակերտական գանձումներէ: Մնացեալը նուիրատութիւններ եւ յատկացումներ են:

Ուսուցիչներու ամսականներու արժեզրկումը թեթեւցնելու նպատակով հոգաբարձութիւնը տարին 180.000 տոլար ընկերային յատկացում տրամադրեց ուսուցիչներուն: Սա կարելի դարձաւ բարերար Ռաֆֆի Մանուկեանի 100.000 տոլարի յատկացումով, Հայաստանի համահայկական հիմնադրամի նպաստով, ինչպէս նաեւ դպրոցին ջանքով գոյացած այլ եկամուտերէ:

Դպրոցին իրենց տարեկան յատկացումները շարունակեցին տրամադրել Ամերիկայի հայ աւետարանչական ընկերակցութիւնը, Lebanese Ladies Cultural Society-ն, Ստեփան Փիլիպոսեան հիմնադրամը, տեարք

Ռաֆֆի Մանուկեանը (թէ ուսուցչաց տոլարով նպաստի, թէ կրթաթոշակի յատկացում), Հրաչ Սիսեռեանը (ի յիշատակ իր ծնողաց՝ Գեղամ եւ Ալիս Սիսեռեանի), տոքթ.ներ Անի եւ Նազարէթ Տարաքճեանները, ՄԱՀԱԵՄ-ի միջոցով HEKS եւ Fondation des Cèdres կազմակերպութիւնները եւ ուրիշներ: Շնորհակալութիւն բոլորին:

Բացի վերոյիշեալներէն դպրոցին զանազան կարիքներուն համար հաստատուած են հետեւեալ յատուկ հիմնադրամները կամ կը կատարուին տարեկան յատկացումներ: ՀԱԳ 80-ամեակի հիմնադրամ (Հայ աւետ. Ա. եկեղեցի), Ալպեռ Պեզճեան, ՀԲԸՄ 2. Մարտի մրցանակ, Նախկին աշակերտ տիար Սարգիս Սիմիրեան, Բիւզանդ եւ Սարգիս Հասըրճեան հիմնադրամ, Արա Պալեան կրթական հիմնադրամ, Զաւէն Մարտիան կրթական հիմնադրամ, Կարապետ Չոլագեան, Եղիսաբէթ Ճանճիկեան, Ասատուր Կիլեսերեան, Մարի Կէօքկէօզեան, Դանիէլ Շնորհոքեան, Օլիվիա Հապիպ, Գրիգոր Պողարեան, Խաչեր Գալուստեան, տոքթ. Բարգէն Մկրտիչեան, Անահիտ Կիլեսերեան, Մարիամ Քաթմերեան, Էօթէն եւ Նազելի Էքմէքճի, տոքթ. Եղիազար եւ Եսթեր Շիրաճեան, Ֆերիտ Սալիպեան, Երուանդ Էքմէքճի, Եղիշէ Մանուկեան, Պատրիկ Աֆէեան, Ալիս Սիսեռեան, Աւետիս եւ Նորա Մենեշեան հիմնադրամները եւ տոքթ. Ճորճ Էքմէքճի առողջապահական ֆոնտը:

ՇՆՈՐՀԱՎԱՆԻՔ

Շնորհակալութիւն կը յայտնենք բոլոր բարերարներուն՝ անհատներ եւ կազմակերպութիւններ, ինչպէս նաեւ ՄԱՀԱԵՄ-ին, Հայկազեան համալսարանին, Հայ աւետ. կրթական խորհուրդին ու Տնօրէններու համադրող մարմինին, ու այն բոլոր մարմիններուն, կազմակերպութիւններուն եւ անհատներուն, որոնք տարբեր ձեւերով աջակից եւ գործակից եղան դպրոցի աշխատանքներուն, նպաստելով անոր հեզասահ ընթացքին, յաջողութեան եւ վերելքին: Յատուկ շնորհակալութիւն Հայ աւետ. Ա. եկեղեցւոյ հովիւին, հոգաբարձութեան եւ խնամակալութեան, ՀԱԳ-ի հոգաբարձութեան, պատուակալ տնօրէնին, Ծնողաց, Տիկնանց օժանդակ եւ Տիկնանց ընկերային մարմիններուն, գործակից ուսուցիչներուն եւ պաշտօնեաներուն, Հայ աւետ. հրատարակչական գրասենեակին ու Տպարան Քեստենեանին:



Արմէն Իրնէշեան (բգթ)
Տնօրէն

ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈԼԷԾ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

Վեր. Ժիրայր Ղազարեան

Պրն. Ներսէս Պաղտոյեան

Պրն. Յակոբ Տէմիրճեան

Պրն. Հրաչ Հասըրճեան

Պրն. Ճոնի Սայիլեան

Տիկ. Կրէյս Վարդան-Տէմիրճեան

Նախագահ

ատենապետ

փոխատենապետ

գանձապահ

խորհրդական

խորհրդական



ARMENIAN EVANG. COLLEGE
Mexique Street
P.O.Box 11-3672
RIAD EL SOLH BEIRUT 1107 2140
LEBANON
Tel. (01) 34 98 16

E-mail: secretary@aecbeirut.com.lb

www.aecbeirut.com.lb

المدرسة الارمنية الانجيلية العالية
شارع المكسيك
ص.ب. ١١-٣٦٧٢
رياض الصلح بيروت ١١٠٧ ٢١٤٠
لبنان
هاتف: ٣٤٩٨١٦ (٠١)

بريد الكتروني: secretary@aecbeirut.com.lb

www.aecbeirut.com.lb

